

ՊԱՏՄԱԿԱՆ

ՍԵԼՈՎԱՄԻ ԱՒԱԶԱՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՄՕՏ ԳՏՆՈՒՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ

1.— Սելովամբ բառին բացատրությունը.

Հին կտակարանի յոճնարէն թարգմանութեան և նոր կտակարանի համաձայն. Սելովամբ կը կոչուի երբայեցեալէն Has-Siloah և Siloah, որ անունն է աղբիւրի մը, ջրանցքի մը և աւազանի մը և այն տեղին որ կը գտնուի Երուսաղէմի հարաւը, Թրէքէոնի հովտին մէջ. Ոփալի, Մորիայի և Սիոնի լեռան միջև, մօտ այն տեղին, ուր կեղբորն կը միանայ Եննոմի ջրին: Աւետարանչին կողմէն (Յովհ. Թ. 7) աւելցրուած որ քարգնանի առաջնայ մեկնութիւնը կը հաստատէ թէ պատմական և աւանդական պարագայի մը համաձայն, նոյն բառը կ'արտասանուի եւ որով և կ'ածանցուի salah արմատով, որ կը նշանակէ զրկում եւ յոճնական նոյն բառին և արտասանուած վերը գործածուած է քաղցրաձայնութեան համար, և Siloan ձեւը արարները առած են Բիւզանդացիներէն: Մեկնիչներուն մեծագոյն մասը այս մեկնարանութեան մէջ կ'ուզեն տեսնել Աւետարանչին մտադրութիւնը մարգարէական և խորհրդական խմատով մը կապելու այս անունը իր կողմէն պատմութիւնք գէպքի մը: Նոյն բառը տառապէս հասուն (ջրոյ) նշանակելով՝ համագոր է ջրանցի և ջրուղի, եւ այս անունը տրուած է անոնց ա'յն ժամանակ՝ երբ անոնք շինուած էին աղբիւրին ջուրը զրկելու թաղաւորաց պարագաները ոռոգելու կամ աւազանը լեցնելու: Զրմուղին անունը յետոյ տարածուած է աղբիւրին, աւազանին և տեղին վրայ:

2.— Սելովամի աղբիւրը.— Ընդհանուր ասացուածքով կը հասկցուի Սելովամի ջուրը. Եսայիի Ը. 6 համարին համաձայն, միւսնոյն ժամանակ կը նշանակէ Սելովամի ջուրերուն ընթացքը: Մարգարէն «գջուրն Սելովայ որ գնայ խաղաղ» քսելով կ'ուզէ

հասկցնել Դաւթի տան պատկերը. իսկ «գջուր գետոյն զհզորն և զյորդ» քսելով՝ եփրաւը, որ կը ներկայացնէ «Աստրեատանի թաղաւորը և անոր զօրութիւնը»: Սելովամը կոչուած է պարզապէս աղբիւր (Բ. Եզր. Գ. 15), վասնզի Երուսաղէմի միակ աղբիւրն էր, միւսները նշանակուած են քաղաքէն դուրս: Առաջին դարու Հրէաներն ալ միւսնոյն ձեով կը բացատրէին Յովսեփոսի բերնով. «Սելովամը ա'յն անունն է զոր կուտանք աղբիւրին»: Հրեայ պատմագիրը նոյնիսկ կը գտնուանէ «Սելովամը և քաղաքէն դուրս գտնուած աղբիւրները»: Ըստ նոյն պատմիչին, Սելովամը կամ «աղբիւրը» քաղաքին կամ Թրէքէոնի հարաւային ծայրը գտնուելով՝ կը վազէ Տաճարին լեռան եւ վերի քաղաքին միջև: Պատմիչը այս կերպով կը սահմանէ ջրանցքին բերանը՝ ուրկէ դուրս կ'եննեն ջուրերը: Բ. Եզր. Գ. 15 համարին մէջ, աւազանի մերձակայ դրան անունը կը կոչուի «աղբիւրի դուռ», անտարակոյս այս դուռն ա'յն է որ 1897ին Բրոֆ. Blissի հետազոտութեամբ գտնուեցաւ վերի լեռան հարաւ-արեւելեան կողմը: Արարները նոյն տեղը կը կոչեն Այն Սիլուան. միանգամայն նոյն անունը կուտան ա'յն աղբիւրին, ուրկէ ջուրերը կուգան: Հերոնիմոս իր Մասքիի Աւեստանի Մեկնութեան մէջ նոյն աղբիւրը կ'անուանէ «Սելովամի աղբիւր», և տեղը ցոյց կուտայ «յոտս Սիոնի լեռան», այսինքն «ի ստորոտ Մորէայ լեռան»:

3.— Սելովամի ջրուղը.— Աստուածաշունչը շատ մը մեկնիչներու և հնախօսներու համաձայն, Սելովամի ջուրերուն համար երկու հոսանք կը յիշատակէ.

ա. Բացօդեայ հոսանք մը, որ կեղրոնէն անցնելով՝ Երուսաղէմի կամ Ոփալի արեւելեան բլուրը կը շրջապատէ:

բ. Միւսնոյն բլուրին ժայռի մը մէջ փորուած անցքը, որ կը տանի նոյն ջուրերը հարաւ. արեւմուտք: Առաջինը ջրմուղի պեղումէն յառաջ է, որուն կ'սկիւնարկէ Եսայի Սելովամի «խաղաղ ընթացքը» բացատրութեամբ (Ը. 6). երկրորդով կ'աւանդուի այն աշխատանքին, որով Եզեկիա ջանացած է ջուրի այս հոսանքը ծածկել թշնամիներէն: Երկաթի գործիքներով ժայռերը փորուած և ջրմուղը շին-

ուած է Գեհոնի ջուրերը իրենց ընթացքէն դարձնելու համար:

4. — Սեղովամի աւազանը. — Բ. Եզր. ԺԳ. 15 և Յովհ. Թ. 7. կը յիշատակուի նոյն աւազանը որ ջրանցքէն վազած ջուրերը կը հաւաքէ: Սեղովամի աւազանը մէկ անգամ միայն յիշուած է Հին Կտակարանին մէջ, իր յատուկ անունով: Նեհմի Բ. 14. Գ. 15 համարներուն մէջ կը յիշուին Նեհմիի աղբիւրին զուռը և Սեղովամի աւազանին պատը թագաւորին պարտէզէն և Գաթի քաղաքէն իջնող ստափճաններու մօտ, 1896ին գտնուած գրքան հիւսիս-արեւելքէն 60 մէթր հեռի և որ Նեհմիի աղբիւրին զուռն ըլլալու երեւոյթը ունի: Այս նշանները ցոյց կուտան թէ աղբիւրը և աւազանը մեծ ննութիւն մը ունին: Նոյն աւազանին հարաւային կողմը շինուած է անցարգել պատ մը, որ կը տարածուի Ուփալի բլուրին հարաւային ծայրէն մինչև Սիոնի արեւմտեան լեռը. 90 մէթրի չափ: Այս պատը երկուքուկէս մէթր թանձրութիւն ունի. վեց մէթր լայնութեամբ հիման վրայ: Պատին մօտ գրանուած են ուրիշ հաստահիմն կառուցուածքներ՝ թուրքին հաստատութեան ծառայելու համար:

Սեղովամի այն աւազանը, ուր մեր Փրկչին կողմէն ի ծնէ կոյրը զրկուեցաւ, աւանդութեան մը համաձայն, այն տեղն է, ուրկէ ջրմուղը կը վազէ: Հոս կը տեսնուի աւազան մը, որուն պատերը այժմ խարխլած են. երկայնութիւնն է տասնեւհինգ մէթր. լայնութիւնը հինգ. նոյն չափ ալ խորութիւնը: Աւազանի մէջ կը տեսնուին սիւնի բեկորներ: Բնիկները կը կոչեն զայն Birket-Siloan: Բրոք. Bliss 1896ին իր պեղումներու ատիթով հոն գտած է մեծ աւազանի մը մնացորդները, որուն մէկ մասն է վերեւ յիշուածը: Գտնուած աւազանը քառակուսի է. հիւսիսէն հարաւ քսան երկու մէթր. արեւելքէն արեւմուտք քսան երեք, բարձրութիւնը հինգ ու կէս: Հիւսիսային կողմը աւազանին մօտ կար մէկ կոնքով (nef) եկեղեցի մը:

1880ին այս ջրմուղին մէջ զիպուածով գտնուած է փլեւիկեան գիրով երբայական արձանագրութիւն մը, որ կը պատմէ այս ջրմուղին պեղումի մասին տեղեկութիւններ: Այս արձանագրութիւնը քանդակ-

ուած է տասն մէթր հեռաւորութեամբ արեւելեան ներսակողման վրայ: Հոս կը գրենք այդ արձանագրութիւնը, Joseph Denbournի ֆրանսերէն (R. J. N^o. 6. հոյ. գեկտ. 1881) թարգմանութեան համաձայն հայերէնի վերածելով զայն:

«Պեղումնի վիջ: Եւ անաւ ի՛նչ որ կը վերաբերի այս պեղումի մասին: Երբ գործաւորները ֆարիասը (pic) կը շարժէին մին միսին յիմաց, երբ քակարին ետի կանգուն կը մնար ժայռը պատնէս, կը խուր ձայն մը՝ որով մին միւսը կը կոչէր, վստմի ժայռին մէջ աջ ու ձախ յիսկ մըշտասանած էր: Եւ պեղումին օրը, գործաւորները կը զարեկին մին միսին յիմաց, ֆարիաս ֆարիասի ղիմ: Զուրերը այն ասին աղբիւրէն վազցին աւազանը, զրեք հազար երկու հարիւր կանգուն երկացնուեցին: Գործաւորներու զիտուն փայ ժայռին քարձուրիւնը միկ կանգունի չափ էր:»

2. — Սեղովամը քիւստնէական ուխտատեղի, եւ անոր եկեղեցին.

Սեղովամի մէջ կատարուած էր ի ծնէ կուրին բժշկութեան հրաշքը ըստ Աւետարանի: Այն օրէն Ժողովրդական դարձան նոյն աւազանի ջրերը և ստացան անոնք բուժիչ զօրութիւն մը՝ հաւատքով մօտեցողներուն համար: Քրիստոնէական առաջին դարերուն իոկ, հոն տակաւին եկեղեցի չհաստատուած, աշաղուրկներ ամէն կողմէ կը գիւմէին բժշկութիւն գտնելու համար. մասնաւորապէս եղիպտոսէն եկողներ կը վկայուի թէ Սեղովամ կ'իջնէին նոյն նպատակաւ: Երուսաղէմի Սոփրոնիոս հայրապետը իր կիւրոս և Յովհաննէս մարտիրոսներու վկայարանութեան մէջ կը յիշատակէ թէ նոյն վիաները տեսիլքով մը թեւադրած են Ս. Մինաս Եղիպտոսի զօրականը և վերին Եղիպտոսի վանականներէն մին որ Սեղովամի ջուրերուն դիմին աչաց բժշկութեան համար: Ժողովուրդը մեծ հաւատք ունէր այդ ջուրերու մասին, այնպէս որ Տնօրինական Ս. Տեղերը այցելող ուխտաւորներ երբեք զանց չէին ընել Սեղովամը: Ինչպէս որ Ս. Տեղերու վրայ կանուխէն եկեղեցիներ շինուեցան, հոս ալ հին դարերու մէջ կառուցուած կը տեսնուի հոյակապ եկեղեցի մը, որուն կամարներուն տակ կը պաշտառանար Սեղովամի աւազանը: Հնախօսներու կարծիքը

կը տարբերի նոյն եկեղեցիի շինութեան թուականի մասին: Ոմանք կը կարծեն թէ եւզովիա թագուհին շինած է զայն երեսնադէմի պարիսպները շինելուն առթիւ. այլք աւելի կանուխ կը նկատեն նոյնին շինութիւնը. ուղեգիրներ որոշ չեն յիշատակի հիմնադիրը: Երեսնադէմի տօնակարգը, որ վրացերէն ձեռագրի մը մէջ գրուած է Goussen Գերմանացին հրատարակած է, ունի հետեւեալ ծանօթութիւնը «17 Ապրիլ, ի Սելովամ յիշատակ Վաղենտինոս կայսեր»: Յուլիանոս Ուրացոյէն յետոյ գահակալած էր Վաղենտինոս: Բիւզանդացի հեղինակներ այս վերջինը կը նշկատեն ջերմեռանդ հաւատացեալ մը, որ առաջին անգամ հիմնադրած է եկեղեցի մը Սելովամի մէջ (364-375), թերեւ իբր փոխադարձութիւն Յուլիանոսի հրէամիտ ապադիւն ձեռնարկներուն: Վաղենտինոսի հիմնարկութեան յետոյ է որ Յուստիանոս կայսրը նորոգել տուած է նոյն եկեղեցին և գմբէթով մըն ալ զարդարել տրուած է զայն: Շատ կանուխէն Սելովամի ուխտաւորները կը նկարագրեն միայն աւազանը ու անոր վրայ կառուցուած կամարները. 451ին է որ պատմականօրէն կը յիշատակուի այս եկեղեցին: Պատրոս վրացի եպիսկոպոսը, որ կ'ապրէր Ե. դարու կիսուն, անանուն կենսագրին ըսածին նաւ յետոյ, իր ուխտագնացութեան առթիւ կը այցելէ ուրիշ ուխտատեղիներէ զատ, Սելովամի եկեղեցին, ուրեմն ա՛ն 451ին շինուած էր արդէն: 570ին ուրիշ ուղեգիր մը, Անտոնիոս վկայ, իր ուղեգրութեան մէջ հետեւեալ կերպով կը նկարագրէ Սելովամի եկեղեցին. «Երբ իջանք կամարի մը մօտ, ուր կար քաղաքին մէկ հին դուռը: Հոն կար աղի ջուր մը որուն մէջ ձգած էին երեմիա մարգարէն: Շատ ստոյգաբաններէն իջանք Սելովամի աւազանը, ուր տեսանք գմբէթաւոր պաղիլիքան, որուն տակէն կը բղխէր Սելովամի աղբիւրը. հոն շինուած էին մարմարիոնէ երկու լողարաններ՝ պատով մը բաժնուած, մին արանց և միւսն կանանց համար, որք կը լուացուէին բարեպաշտութեամբ: Այս ջուրերուն մէջ կային զանազան բուժիչ զօրութիւններ և շատ հիւանդներ կ'առողջանային: Անդաստակին առջև կար մարդոցմէ շինուած լայն աւազան մը, ուր ժողովուրդը յաճախակի կը

լուացուէր: Շատ ժամանակ ջուրը աղբիւրէն կը վազէր առատօրէն և կ'երթար Գեթսեմանիի հովիտը՝ որ կը կոչուինաւ Յովսափատ. . . »: Այս խօսքերը բոլորովին համահայն են վերջին ստորիներու մէջ կատարուած հնաստական պեղումներուն: 614ին պարսկական յարձակումներու հետեանքով՝ կործանուեցաւ Սելովամի եկեղեցին և այդ պատճառաւ Անտոնիոս վկայէն վերջ այցելող ուղեգիրները մ'ենէ ծանօթութիւն չեն տար նոյն եկեղեցիի մասին: 1896ին միայն Բրօք. Bliss և Dickie իրենց հնագիտական պեղումներով երեան հանելին Սելովամի եկեղեցիին մնացորդներն և վերակազմեցին անոր վաղեմի յատակագիծը: Միջին դարու արար մատենագիրներէն Խտիրիս կը յիշատակէ աւետարանական յիշատակը Սելովամի նկատմամբ, մինչ Մուգատտասի 985ին կը պատմէ թէ Սելովամ կ'ոռոգէ ընդարձակ պարտէզներ, որ քաղաքին աղքատներուն անունով վազգի կ'առնէ. իսկ 1047ին Նասիր-ի-Սոսրով կը հաստատէ որ՝ եթէ մէկը լուացուի Սելովամի մէջ կը բուժուի իր ախտերէն, և կ'աւելցնէ թէ Սելովամի մէջ հաստատուած են զթութեան զանազան յարկեր, ուր կը խնամուին հիւանդները երեսնադէմ քաղաքին ծախքովը. հոն շինուած է նաև հիւանդանոց մը՝ ուր կան թոշակաւոր բժիշկներ:

3. — Սելովամի մօտ գտնուող Հայկական վանքեր.

Հայաստանի նախորարութիւններէն ոմանք, ինչպէս Ս. Տեղերու ալիւալ կէտերուն վրայ, նոյնպէս Սելովամի մօտ, իբր նուիրական տեղ մը, վանքեր շինած են, հոն պատասպարելու համար այն բազմաթիւ հայ ուխտաւորները, որոնք իրենց հոգեւոր և մարմնաւոր ցուերուն դարմանումին համար կը դիմէին Սելովամի փըրկարար ջուրերուն: Հայք Բիւզանդական տիրապետութեան ժամանակ ունէին շատ վանքեր Սելովամի շրջակաները. տեղական պայմանները կը դիւրացնէին նոյն վանքերու շինութիւնները: Պաղեստինագէտ Glermont-Ganneau կը դիտէ թէ Սելովամի մօտ գտնուող Ակեղզամայի բլուրներուն հին օրերէն մնացած Յերուսական քարայրները վանականներուն կողմէն կը

գործածուէին իբր բնակարան, հերիք է որ մէն մի վանական կարենար իրեն համար ճարել ջրհոր մը և փոքրիկ պարտէզ մը: Վանականներու տեղական բողոքով խնայարարութիւններ կը կազմէին միաբանութիւն մը, որ չուտով կ'ունենար իր եկեղեցին. հաւանական է որ այս մտածումը ճիշդ ըլլայ և այդ պատճառաւ է որ Անաստաս վրդ. իր վանորէից ցուցակովն շատ վանքեր ցոյց կուտայ մեզ Սելովամի մէջ: Ուստի մերժելով նոյն ցուցակին ձեռնմխուած ու կրկնուած անանուն վանքերը, հոս կը գնենք միայն նոյն սրբավայրին մէջ որոշ կերպով յիշուած հետեւեալ չորս վանքերը, որք են.

1.— Նորախանի, մերձ ի գերեզման Եսաւայ մարգարիին, ի նոյն կողմն Չիքնեկաց լեռին, գոր սցմի քակալ են ասիկիս.— Սելովամի մօտ էր Եսայի մարգարէին գերեզմանը, ինչպէս կը վկայեն Որոգիկես (P. G. XIII. 881. 1570. 1636) և Հերոնիմոս իր Եսայիայ մեկնութեան մէջ (in Js. 10. P. L. XXIV. 33) թէ Եսայի գերեզմանը Սելովամի մօտ էր. և Յայսաուոսին ալ կը հաստատէ զայն: Քրիստոնէական հնախօսութիւնն ալ վերջին տարիներու մէջ Սելովամի մերձակայ քարայրներու մէջ գրտած է յունարէն արձանագրութիւն մը՝ նուիրուած Եսայի մարգարէին յիշատակին. ուրեմն ճշգրտութիւն մըն է ցուցակագիր վարդապետին Սելովամի հայկական Նորավանքին տեղագրութիւնը:

Նորավանք անուամբ վանք մը ունեցեր ենք նաև Սիւնեաց աշխարհին Վալոց Զոր գաւառին Ամաղու գիւղին մօտ, նոյն յանուն Ս. Փոկասու և յետոյ Ս. Կարապետի և Ս. Ստեփանոսի փոքր եկեղեցիով մը, որուն շուրջ շինուած է մեծ վանք մը Նորախանի կոչուած, ուր Օրպելեանց իշխաններուն և եպիսկոպոսներուն տապալանատունը եղած է. և ան ընդհատներով տեւած է մինչև ԺԶ. դար: Այս վանքին հիմնարկութեան և վերաշինութեան համար պատմիչ Ստեփանոս Օրպելեան ունի ընդարձակ տողեր, որոնցմէ կը հասկցուի թէ վերջ յիշուած եկեղեցիին մէջ շինուած էր գեղեցիկ աւաղան մը այն ջուրէն, որ կը բղկէր սեղանին տակէն, և ամէն կողմէն կուգային ախտամէտք և բորոտներ լուացուիլու և բժշկուիլու համար. (Սխալան, էջ 184-204): Այս պարագան ինձ կը

թելադրէ ըսել թէ հին դարերուն Երուսաղէմ եկող Սիւնեաց գաւառի ուխտաւորները Սելովամ աչքելած ու անոր ջրերէն օգտուած են և վերադառնալով հայրենիք Նորախանի անունով վանք ու եկեղեցի շինած են ի յիշատակ Սելովամի աւաղանի հայկական Նորավանքին: Պատմութենէն յայտնի է որ ինչպէս տօները ու ծխական սովորութիւնները ուխտաւորաց միջոցաւ տարածուած են Երուսաղէմէն դուրս, նոյնպէս Տնօրինական Ս. Տեղերու յիշատակը նոյն միջոցաւ հաստատուած է գաւառաց մէջ:

2.— Խաղայ Երանկոյ վանքն, որ և ի Զորն Յովսափասու, մերձ ի Գերսեւանի.

Խաղ Կարնեցի եպիսկոպոսը, որ տեղապահ էր Մեծն Ներսէսին, կը յիշեն Բիւզանդ և Խորենացի պատմիչները, թէ ինչպէս Հալոց Արշակ Թաղաւորը չտոկաց Խաղին իրաւացի յանդիմանութիւններուն և հրամայեց որ քաջքնն և քարկոծեն նոյն եպիսկոպոսը: Բայց ըստ Խորենացոյն, Խաղի աղջկան տողերն, որ Ապահունեաց նախարարութեան կը վերաբերէին, եպիսկոպոսը քարկոծողները սրով սպաննեցին և ազատելով Խաղը փախան իրենց երկիրը: Ապահունիք կը բնակէին Վանայ ծովին արեւմտեան կողմը, Խաղ եպիսկոպոս ինքն ալ կը վերաբերէր աշտուկան տոհմի մը: Ապահունիք խնամեցած Խաղ եպիսկոպոսն անոր ի յիշատակ կը շինեն վանք մը Սելովամի մօտ: Անաստասի ցուցակին մէջ Ապահունեաց նախարարութեան անունով վանք չէ յիշատակուած, և անկարելի է որ նոյն վաղեմի նախարարութիւնը անմասն մնար Ս. Տեղերուն բարեպաշտական յիշատակներէն. այնպէս կը հաւատանք թէ Խաղի անունով շինուած Սելովամի վանքը կը պատկանի Ապահունեաց նախարարութեան:

3.— Մոկաց վանք. 4.— Զորորոյ վանք Սիւնեաց ի Զորն Յովսափասու: Երուսաղէմի արեւելքը կը գտնուէին Սիւնեաց միւս երեք վանքերը, իսկ Զորորոյը Սելովամի մօտ: Այս բոլոր վանքերը կործանուած են Պարսից և Արաբաց արշաւանքներուն ժամանակ և այլևս չեն վերաշինուած, բայց միջին դարուն, ըստ վկայութեան Արաբացի պատմիչներուն, որքան որ Սելովամի շրջականները այլևս գոյութիւն չունէին

բիւզանդական շրջանի կրօնական կեանքը ու փոնականութիւնը, սակայն և այնպէս բոլորովին չէին ջնջուած կրօնաւորական միարանութիւնները: Թ. զարու Com-memoratorium Casis Dei կոչուած պաշտօնական յիշատակարանը արձանագրած է Յովսափատու մէջ կոյսեր, մենակացներ և մատուներ: 985ին Մուզատաէսի կը յիշէիք Սելովամի մէջ կային պարտէզներ, այգիներ և եկեղեցիներ, անտպատականներ ու գերեզմաններ, և կը շեշտէ թէ բոլորովին չէ վերջացած կրօնաւորական կեանքը (Guy le Strange, Palestine under the Moslems, էջ 219): Մինչև ժ.Ֆ. զար տեւած է Սելովամի և շրջակայից վանական կեանքը, այնպէս որ նոյն առին ևս պակաս չէին հայ, յոյն և ասորի կրօնաւորներ նոյն տեղւոյն մէջ, ինչպէս որ կը վկայեն յիշատակարանք (Revue Biblique 1919. էջ 493-495): Ուստի կրնանք ըսել թէ այս կողմերու հայ վանականութիւնը, հօրի և սօրի մկրտութիւնը բազմիցս ընդունելէ վերջ, զարձեւ կարողացած է մնալ այս կողմերը, մինչև Խաչակրաց ժամանակ: Ուստի ինձ համար ճիշդ կը թուի երուսաղէմի Ժմկկը. Պատմական հեղինակ Աստուածատուր եպիսկոպոսի սա աղնարկութիւնը թէ (Ա. Հաս. էջ 87) Սելովամի մօտ ընդօրինակուած հայերէն ձեռագիր մը ինքը տեսած է Ս. Յակոբի մատենադարանին մէջ. թէ և չիշատակեր թէ ի՛նչ էր ձեռագիրը և ո՛ր դարուն գրուած, ձեռնհասները կ'անգիտանայ այդ մասին: Այս կերպով ժ.Ֆ. զարը կը փակէ Սելովամի կրօնաւորական կեանքը, ու բայցի աւաղանին ջրոց պարզեցնելէն, կը տիրեն հոն ամայութիւն և կրօնական կեանքին բարդուած վիճակի մը մնացորդները:

Այս յօդուածը խմբագրելու առթիւ օգտուած ենք նաև հետեւեալներէն.

1. Diet. Biblique, Vigouroux.

2. Excavation at Jerusalem, 1894-1897.

by Bliss and Dickie.

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱՒՆՈՒՆԻ



ԿՐԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Է.

ՍԻՄԷՈՆ Ա. ԶԵԹՈՒՆՅԻ

1939 Ապրիլ 7 Էջ. — № 1515

Շատ ցաւալի է որ պատմութեան տեղ պատգութիւն մը կայ մեր առջև: Թերեւս այս պատգութեան գլխաւոր պատճառներէն մէկն է երկրին քաղաքական վիճակը: Կրիկիոյ կը հեծնէր ձորապետներու բռնակալութեան ներքեւ: Կաթողիկոսներուն կեանքը տառապանք էր պարզապէս. որովհետեւ իրենց կեանքը կախուած էր այդ ձորապետներու քանհանգիստէն: Հարստահարութեան ծանր ճնշումը թեթեւ չհանար՝ կաթողիկոսներ պարտաւոր էին կշտացնել հարստահարիչները մեծ մեծ զոհողութիւններով: Սուլթան Սուլէյման Գամուկի, որ այս միջոցին նրահանց կրիկիոյ շրջանակն ալ և վերածեց զայն Սամանեան կայսրութեան մէկ նահանգին (Ազգապատմ., էջ 2259), բարեփոխեց կրիկիոյ քաղաքական վիճակը, բայց չմեղմացաւ կրիկիոյ կաթողիկոսներուն տառապանքը, որոնք միշտ ենթարկուած մնացին ձորապետներու հարստահարութեանց մինչև Աջպահաններու շրջանը, և միայն ժթրդ զարուն սկիզբն է որ ընթացիկութեան ձորապետութիւնը Սիւրի լեռներուն մէջ, իօզանսողութեան ընաշնչուեալով:

Պատմական տեղեկութիւններու համար առայժմ ստիպուած ենք դռնաւ ինչ ինչ յիշատակարաններով: Ասոց առաջինն է Սոսի Մաւսոցը(*), որու դատարկ մասերուն վրայ կրիկիոյ կաթողիկոսներէն սմանք ստորութիւն բրած են իրենց ձեռքով արձանագրել իրենց զահակալութեան թուականները կամ ուրիշներ արձանագրած են զանոնք օրը օրին: Իսկ միւսներն են ձեռագրական յիշատակարաններ, որոնց մէջ կը յիշուին ժամանակակից կաթողիկոսներու անունները:

Այդպիսի յիշատակարանները յառաջ կը բերենք նշանութեամբ, իրենց սղուած և աղճատ ձևին մէջ, առանց հպելու նոյն իսկ քերականական աղաղակոյ սխալներու: Ասոնք շատ պերահափօս են իրենց հայերէնով և ցոյց կուտան իրենց հեղինակներուն կարողութեան չափը:

(*) Այս Մաւսոցը, որ կը բովանդակէ եպիսկոպոսական եւ կարողիկոսական ձեռնադրութեանց, ինչպէս նաեւ քաղաւորօրինիկ կանոններ, կը ներկայացնէ Ժ.Գ. դարու կրիկեան գշարուեալին գեղեցիկ նմաներէն մէկը: Այս Մաւսոցը Սիւրի կարողիկոսարանին ազատաւ սրբութիւններէն մէկն է, որ կը պանուի Վեն. Սահակ Բ. Կարողիկոսին իգլ՝ Հաղպա:

